ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» մարտի 2012թ. N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1–ին մասի 17-րդ կետով և 2-րդ մասով `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց կառուցվող վերգետնյա անցումների վրա գովազդային տարածքի տրամադրման վարձավճարի և դրանց երկու կողային մակերեսներին արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրքի գումարներով հատուցելու վճարման սկզբունքին:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սույն որոշմամբ սահմանված գործարքի արդյունքում կնքել կառուցվող վերգետնյա անցումների գովազդային տարածքի տրամադրման վարձակալության պայմանագիր:

3. Ընդունել ի գիտություն, որ

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված սկզբունքով Երևան քաղաքում վերգետնյա անցումների կառուցման աշխատանքների համար որակի տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների համար Երևան քաղաքի բյուջեում նախատեսվելու են համապատասխան միջոցներ,

2) սույն որոշման 1-ին կետով սահմնանված գործարքն իրականացնելու նպատակով Երևան քաղաքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում նախատեսվելու են համապատասխան միջոցներ,

3) սույն որոշմամբ նախատեսված գործարքներն իրականացվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

4) սույն որոշման 1-ին կետով նախատեսված սկզբունքով գործարքն իրականացնելու դեպքում գովազդային տարածքի տրամադրման վարձավճարի և արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրքի գումարները Երևան քաղաքի բյուջեի եկամտային մասում նախատեսվելու են ամբողջ ծավալով, և հաշվառվելու են որպես վարձավճարի և տեղական տուրքի կանխավճար, որոնք կմարվեն առաջարկված տարիների ընթացքում,

5) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքի շրջանակներում կնքվող կապալային աշխատանքների կատարման պայմանագրի վճարումները կատարվում են հանդիպական՝ բանկային և գանձապետական համակարգի միջոցով՝ միաժամանակյա վճարում–գանձում եղանակով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց վճարման սկզբունքին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանու հավանությանը արժանացնել Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց կառուցվող վերգետնյա անցումների վրա գովազդային տարածքի տրամադրման վարձավճարի և դրանց երկու կողային մակերեսներին արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրքի գումարներով հատուցելու վճարման սկզբունքին: Վճարման նշված ձևաչափի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ Երևանի քաղաքապետարանին են դիմել առևտրային կազմակերպություններ նմանատիպ առաջարկություններով և առաջարկել համապատասխան ներդրումային ծրագրեր: Միաժամանակ, քանի որ նշված աշխատանքների իրականացումը գովազդային տարածքի տրամադրման վարձավճարի և արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքի հանրագումարի ձևով է հատուցվելու, ապա առավել նպատակահարմար է համայնքի համար, որ համապատասխան կազմակերպության ընտրությունը կատարվի մրցակցային եղանակով՝ ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն որոշման նախագծի ընդունման դեպքում նշված աշխատանքների իրականացման համար Երևան քաղաքի բյուջեի եկամտային ու ծախսային մասերում կնախատեսվեն համապատասխան միջոցներ: Նախատեսվում է նաև բյուջեի ծախսային մասում աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների գումարները հատկացնել: Միաժամանակ, սույն որոշման նախագծով սահմանված գործարքի շրջանակներում կնքվող կապալային աշխատանքների կատարման պայմանագրի վճարումները կատարվում են հանդիպական՝ բանկային և գանձապետական համակարգի միջոցով՝ միաժամանակյա վճարում–գանձում եղանակով, այսինքն՝ կապալառու ընկերության կողմից գումարները փաստացի վճարվում են բյուջեի համապատասխան եկամտային հաշվին, որից հետո ընդունման–հանձնման

արձանագրությունների հիման վրա կատարվում են աշխատանքների դիմաց վճարումները։

Որոշման նախագծով նախատեսվում է նաև նախատեսված սկզբունքով գործարքն իրականացնելու դեպքում գովազդային տարածքի տրամադրման վարձավճարի և արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրքի գումարները Երևան քաղաքի բյուջեի եկամտային մասում նախատեսել ամբողջ ծավալով և հաշվառել որպես վարձավճարի և տեղական տուրքի կանխավճար, որոնք կմարվեն կապալառու կազմակերպության կողմից գնային առաջարկից կախված համապատասխան տարիների ընթացքում։

Ելնելով վերոգրյալից Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց վճարման սկզբունքին հավանություն տալու մասին» ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց վճարման սկզբունքին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց վճարման սկզբունքին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ